ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹՎՈՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀՆԵՐԻՆ, ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍԻՆ, ԹԵՄԱԿԱՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ, ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒ ԲՈԼՈՐ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻՆ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲՈԼՈՐ ԹԵՄԵՐԻՆ

Շնորհոք Քրիստոսի Մեծդյան մեծ և սքանչելի խորհուրդի, Միածնաէջ Մայր Տաճարին հայրական սիրո ողջույն և օրհնություն հայրապետական՝ Ձեզ Սրբազնության, հոգևոր դասուն, բնական իշխանության, եկեղեցական, հայրենասիրական, բարեսիրական կազմակերպությանց և համայն մեր հավատացյալ ժողովրդյան:

Ջերմապես կմաղթենք բոլորիդ հաջողող ու երջանիկ կյանք ընտանեկան հարկերու տակ, շրջապատված Ձեր սիրելիներով, ու նաև ուժ և եռանդ և աստվածային օգնություն՝ Ձեր աշխատանքը առավել ևս պտղաբեր դարձնելու համար ի հաստատություն մեր Ս. եկեղեցվո և ի բարօրություն ու միություն հայ ժողովրդյան:

Տիրավանդ խաղաղությունն ու հանությունն ի մարդիկ բոլ առատապես իջնեն աշխարհի վրա, որպես ցող երկնային բարեբար ողորմության:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Պ. ՆՈՒՊԱՐ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻՆ (*ՄԱՆՉԵՍՏՐ*),
Պ. ԳԵՎՈՐԳ ԵՍԱՅԱՆԻՆ (*ՓԱՐԻԶ*),
Պ. ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԵՎ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ (*ՆՅՈՒ-ՅՈՐՔ*),
Պ. ՌՈՄԱՆ ԵՍԱՅԱՆԻՆ (*ԹԵՀՐԱՆ*),
Պ. ՎԱՀԱՆ ՄԱԼԵՋՅԱՆԻՆ (*ՆԻՑՑԱ*),
Պ. ՍԱՐԳԻՍ ՔՅՈՒՐՔՃՅԱՆԻՆ (*ԼՈՆԴՈՆ*),
ԱԲԳԱՐՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆՉՆԱԽՄԲԻՆ (*ԼՈՆԴՈՆ*),
Պ. ՄԱՐՔՈ ՊԱՔՐՃՅԱՆԻՆ (*ՄԱՆՉԵՍՏՐ*):

Շնորհոք Քրիստոսի Մեծդյան մեծ և սքանչելի խորհուրդի, Միածնաէջ Մայր Տաճարին ընդունելիք հայրական սիրո ողջույն և օրհնություն հայրապետական՝ Ձեզ և Ձեր ընտանիքի բոլոր անդամներուն:

Ջերմապես կմաղթենք հաջողող ու երջանիկ կյանք ընտանեկան հարկի տակ, շրջապատված Ձեր սիրելիներով, ինչպես և ուժ ու եռանդ, աստվածային օգնություն՝ Ձեր գործունեությունը առավել ևս պտղաբեր դարձնելու համար ի հաստատություն մեր Ս. եկեղեցվո և ի բարօրություն ու միություն հայ ժողովրդյան:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Թեմիս Պատգամավորական ժողովը հոտնկայս, ակնածանքով ունկնդրեց Ձերդ Վեհափառության օրհնություններն ու մաղթանքները: Մեր միջոցով ժողովը Ձերդ Ս. Օծության կնդե իր որդիական սերն ու հավատարմությունը, մաղթելով բեղմնավոր երկար տարիներ Ձերդ Սրբության և անսասանություն Մայր Աթոռին:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ՝

ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան տոներուն առթիվ ընդունեցեք մեր և թեմական խորհուրդի ու թեմիս հոգևորական դասուն, եկեղեցվո տնօրեն մարմիններուն և համայն ժողովրդյան որդիական ջերմագին բարեմաղթությունները: Ձերդ Վեհափառության արհշատություն և Ձեր ազգաշեն ծրագիրներուն՝ կատարյալ հաջողություն:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ՝

ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆ

ԿԱՀԻՐԵԻՑ

Անձամբ մեր և Եգիպտոսի հայության անունից խնդրում ենք Ձերդ Սրբությանը ընդունել մեր ամենահարգալի բարեմաղթությունները նոր տարվա և Ս. Ծննդյան առթիվ: Մաղթում ենք երկար և բարեբաստիկ Հայրապետություն: Աղոթում ենք Աստուծուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մայր Հայրենիքի պայծառության համար:

ԱՌԱՋՆՈՐԴ ԵԳԻՊՏԱՀԱՅ ԹԵՄԻ՝

ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՅԱՆ

ԻՆԳԼՎՈՒԴԻՑ (ԿԱԼԻՖՈՐՆԻԱ, ԱՄՆ)

Ամանորի և Ս. Ծննդյան տոնին առթիվ շնորհավորություններ և սրտագին մաղթանքներ:

ՎԱՐԴԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԷՋՄԻԱԾՆԻՑ

Որդիաբար շնորհավորելով Ձեր Նոր տարին՝ մաղթում եմ Սրբությանդ արհշատություն՝ ի փառս Հայ եկեղեցու և հավատացյալների:

Թող Ամենաբարձրյալն Իր ամենազոր Աջը հովանի պահե Ձեր գլխին, որպեսզի Ձեր ազգանվեր և եկեղեցանվեր գործերը հաջողությամբ ի կատար ածեք:

Մաղթում եմ Ս. Էջմիածնին անսասանություն:

ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան տոնին առթիվ ընդունեցեք մեր և Հարավային Ամերիկայի հայության սրտագին մաղթանքները Ձեր թանկագին կյանքի և Մայր Աթոռ պայծառության համար: Կաղոթենք ի սրտե, որ բարին Աստված Ձեզի պարգևե երկար և առողջ կյանք և հաջողություն Ձեր աստվածահաճո գործերուն:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ՝

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՔՎԻՑ

Շնորհավորում եմ Ձեզ նոր տարվա առթիվ, ցանկանում եմ երկար կյանք, լիակատար առողջություն, երջանկություն:

ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՐՈՍՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

Խոնարհաբար կփութամ շնորհավորել նոր տարին և Փրկչին Ս. Ծննդյան հրաշափառ տոնը, բարեմաղթելով համայն աշխարհի խաղաղություն, տերության հաջողություն և մարդկության եղբայրական սիրելություն: Բեթղեհեմի Աղտարության Արեգակն Հիսուս Քրիստոս անսասան պահե Հայոց պանծալի Աբոռ Ս. Էջմիածինը՝ իր արժանբնիր Դահակալով, և պարգևե Ձերդ Վեհափառության արևաշատ կյանք և անդորր երկար տարիներ՝ Քրիստոնեական եկեղեցվո փառք և Հայ Ազգի պարծանք լինել արժանացնելով:

ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՓԱՐԻԶԻՑ

Նոր տարվա և Ս. Ծննդյան տոների առթիվ, հավատացյալների և հայ եկեղեցու խորհրդի անունից հղում ենք Ձեզ ջերմագին շնորհավորություններ և հարգալից մեծարանքներ: Ցանկանում ենք Ձեզ առողջություն և Հայաստանյայց եկեղեցուն՝ բարգավաճություն:

Արևմտյան Եվրոպայի հայոց Հայրապետական պատվիրակ՝

ՍԵՐՈՎԲԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՖՐԵԶՆՈՅԻՑ (ԿԱԼԻՖՈՐՆԻԱ, ԱՄՆ)

Ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ կշնորհավորենք Ձերդ Ս. Օծությունը հանուն բեմիս հոգևորական դասուն, երեսփոխանական ժողովի, կեդրոնական վարչության, հոգաբարձությանց և բոլոր եկեղեցական, ազգային և բարեսիրական կազմակերպությանց ու համայն մեր ժողովուրդի, մաղթելով երկար և արդյունավոր կյանք Ձեզի, խաղաղություն աշխարհի, բարեզարդություն եկեղեցվո և հաստատություն ու պայծառություն Մայր Աթոռոս:

Առաջնորդ հայոց Կալիֆորնիա բեմի՝

ՇՆՈՐՀՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԱԼՍՏՅԱՆ

ԲԱՔՎԻՑ

Բաքվի հայոց եկեղեցու համայնքը, Ադրբեջանի և Թուրքեստանի հայոց բեմական խորհրդին կից սպասարկող հոգևոր և աշխարհիկ անձնակազմը և անձամբ ես շնորհավորում ենք Ձեզ բարեբաստիկ նոր տարվա առթիվ: Հայ ժողովուրդը հանձին Ձերդ Սրբության ունի հավատարիմ ու նվիրված Հոգևոր Հովիվ և Հայրապետ: Ամբողջ հոգով ցանկանում ենք Ձեզ՝ հայ ժողովրդի արժանավորագույն ընտրյալին՝ առողջություն, երկար տարիներ ու եռանդ՝ Ձեր ազնիվ գաղափարները կենսագործելու՝ ի բարօրություն ժողովրդի:

Ադրբեջանի և Թուրքեստանի հայոց առաջնորդ՝

ԵՂՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂՆԱՎՈՒՐՅԱՆ

ԼՈՆԴՈՆԻՑ

Տոնական օրերուն առթիվ հանձնեմ ընդունիլ Լոնդոնի համայնքին որդիական սերն ու շնորհավորությունները: Աստված Ս. Էջմիածինը միշտ պայծառ և հաստատուն պահե և Ձերդ Ս. Օծությունը՝ փառավոր:

ՊՍԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՒՄԱՅԱՆ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Թույլ տվեք շնորհավորել Ձեզ նոր տարվա և Ս. Ծննդյան տոնի առիվ: Ցանկանում ենք Ձեզ առողջություն, երկար կյանք և հաջողություններ՝ ի բարություն եկեղեցու և մեր պանծալի Հայրենիքի:

ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ,
ԽԱՉԱՏՈՒՐ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
ՊՐՈՖ. ԱՌԱՔԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՌՈՍՏՈՎԻՑ

Թեմական խորհուրդը, հոգևորականությունը, հավատացյալները և անձամբ ես շնորհավորում ենք Ձեզ նոր տարվա և Փրկչի Ծննդյան առաջիկա տոնի առիվ: Ցանկանում ենք Ձեզ առողջություն, երկար կյանք, բեղմնավոր հոգևոր գործունեություն՝ ի բարություն հայ ժողովրդի և Հայրենիքի: Համբուրում ենք Ձեր Ս. Աջը:

Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի հայոց առաջնորդ՝
ԳԱՐԵԳԻՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՄԻԱՄԻՑ

Նոր տարվան և հրաշափառ Ս. Ծննդյան տոնի առիվ խորին ակնածանքով կշնորհավորեմ Ձեր Վեհափառությունը և կմաղթեմ Ձերդ Ս. Օծության երջանիկ, առողջ, բարգավաճ երկար տարիներու շարք մը:

Միամիի փոքր համայնքին ուղիղական հարգանքները կներկայացնեմ Ձերդ Ս. Օծության, միացնելով անոնց հետ նաև իմ ալ ջերմ և խոնարհ հարգանքները:

ՎԱՀՐԱՄ Ծ. ՎՐԴ. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

ՎԻԵՆՆԱՅԻՑ

Ամանորի և Քրիստոսի Ծննդյան տոներու առիվ խոնարհաբար կհայտնենք սրտագին շնորհավորություններ:

ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՅՈՒԹՅՈՒՃՅԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻՑ

Աստվածահայտնության սուրբ տոնին մենք, քահանայական դասը, թեմական խորհուրդը և Շիրակի համայն հավատացյալ ժողովուրդը ի սրտե շնորհավորում ենք Ձերդ Սրբության և աղոթում մանկացյալ Փրկչին, որ Ձեզ պարգևի երկար տարիների քաջառողջ հովվապետություն: Թո՛ղ Ձեր սուրբ պատարագի օրհնությունը մեր վրա լինի:

Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ՝
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՏՐՈՅԻՑ

Ուղիղական խոնարհությամբ և սիրով կփափաքիմ մատուցանել իմ սրտագին շնորհավորություններս Ս. Ծննդյան տոնին առիվ:

Կմաղթեմ, որ Փրկչին Ծննդյան տոնին և ամանորի առիվ մնայուն խաղաղություն հաստատվի երկրի վրա, հանություն մարդոց միջև և Տերը պայծառություն ու հաստատություն պարգևե Հայաստանյայց Ս. Եկեղեցվո, ինչպես նաև բարություն մեր ժողովուրդին ամենուրեք. կմաղթեմ նաև, որ շարունակե ծաղկիլ մեր թանկագին Հայրենիքը:

Ձերդ Ս. Օծության այս առիվ կմաղթեմ արևշատություն, կատարյալ առողջություն և ի Տյառնե հաջողություն Ս. Օծությանդ բոլոր ձեռնարկներուն:

ԲԱԲԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ

ԼՈՆԴՈՆԻՑ

Ես և իմ բնտանիքի բոլոր անդամները մեծապես պատվված ենք Ձերդ Ս. Օծության բարեմաղթություններով նոր տարվա և Ս. Ծննդյան առթիվ և խոնարհաբար խնդրում ենք Ձերդ Ս. Օծությունից ընդունել մեր հարգալիր և որդիական շնորհավորությունները ու բարեմաղթությունները:

ՆՈՒՊԱՐ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ

ՓԱՐԻԶԻՑ

Ի պատասխան Ձերդ Ս. Օծության նոր տարվա և Ս. Ծննդյան բարեմաղթության և օրհնության, երախտապարտ զգացմամբ, հանդերձ բնտանյոք, կուզանք շնորհավորել Ձեր նոր տարին և մաղթել Ձեզ երկար օրեր օգտաշատ գործունեությամբ:

Աստված հաստատուն և պայծառ պահե մեր Մայր Աթոռ Ս. էջմիածինը Ձերդ Վեհափառության ղեկավարության տակ:

ԳԵՎՈՐԳ ԵՍԱՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔ

ԹԵՀՐԱՆԻՑ

Խորին շնորհակալությամբ ստացա Ձերդ Ս. Օծության շնորհավորանքը: Ընտանյոք որդիական խորին հարգանքներով շնորհավորում ենք Վեհիդ նոր տարին և Քրիստոսի Ս. Ծնունդն ու Մկրտությունը, ցանկանալով Ձեզ երկար խաղաղ կյանք, հաջողություն մեր ազգային գործերուն, մեր սիրելի Կաթողիկոսին: Սրտագին աջահամբույր:

ՌՈՄԱՆ ԵՍԱՅԱՆ

ՆԻՑՑԱՅԻՑ

Շնորհապարտ զգացումով Ձեր հայրապետական մաղթանքներուն և օրհնության համար, կմաղթեմ, որ հայությունը ընդերկար վայելե Ձեր բարձր հովանին:

ՎԱՀԱՆ ՄԱԼԵՋՅԱՆ

ԼՈՆԴՈՆԻՑ

Շնորհակալություն ենք հայտնում Ձերդ Ս. Օծությանը Ձեր սիրալիր հեռագրի համար և խոնարհաբար խնդրում ենք ընդունել մեր հավատարիմ ողջույնները ու լավագույն մաղթանքները նոր տարվա առթիվ:

ԱԲԳԱՐՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ՄԱՆՉԵՍՏՐԻՑ

Սրտագին շնորհակալություններ Ձեր հեռագրին և սիրո ողջույններուն ու օրհնություններուն համար: Փոխադարձաբար կշնորհավորեմ նոր տարին և Ս. Ծնունդը, մաղթելով երջանիկ և երկար կյանք Ձերդ Վեհափառության՝ ի պայծառություն էջմիածնի և խաղաղություն ընդհանուր աշխարհի:

ՄԱՐՔՈ ՊԱՔՐՃՅԱՆ

ԹԲԻԼԻՍԻՑ

Այսօր, հունվարի 1-ին, հանդիսավոր պատարագ մատուցվեց և կատարվեց գոհաբանական մաղթանք: Հավատացյալ ժողովուրդը և բեմական խորհուրդը հղում են Ձերդ Վեհափառությանը սրտագին շնորհավորանքներ, ցանկանում են Ձեզ բաջառողջություն և երկար կյանք՝ ի բարգրություն հայ ժողովրդի:

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Թաղական խորհուրդս իր և Բուխարեստի ծխականներու կողմն կխնդրե որ ընդունիք ջերմագին շնորհավորություններ նոր տարվան և Ս. Ծննդյան տոներու առթիվ: Կբարեմաղթենք Ձեզ կատարյալ առողջություն և երկար կյանք: Թող Ձեր Հայրապետությունը նոր էջ մը բանա Հայոց եկեղեցվո պատմության մեջ, համախմբելով Սփյուռքի ցիր ու ցան եղած հայությունը Մայր Աթոռի շուրջը՝ ի սպաս մեր պաշտելի Հայրենիքի:

ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՀԱՅՈՑ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Նոր տարվան և Ս. Քրիստոսի հրաշափառ Ծննդյան տոներու առթիվ կփութանք հղելու Ձեզ Վեհափառության մեր հավատացյալ ժողովուրդին և թեմական խորհուրդին սրտագին շնորհավորություններն ու բարեմաղթությունները՝ Ձեր արևշատության ու Մայր Աթոռի անսասանության համար:

ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՍՈՖԻԱՅԻՑ

Նոր տարվա և Ս. Ծննդի առթիվ ընդունեցեք բուլղարահայ հավատացյալների անունից որդիական սրտագին մաղթանքներ՝ Ձեզ Վեհափառության քաջառողջության և արևշատության համար:

ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՍՈՖԻԱՅԻՑ

Սոֆիայի եկեղեցական խորհուրդս և հավատացյալները շնորհավորում ենք նոր տարին և Քրիստոսի Ս. Ծնունդը: Ցանկանում ենք Ձեզ Վեհափառության երկար կյանք՝ ի բարօրություն Հայ եկեղեցվո և ի ծաղկում մեր հարազատ Հայրենիքի:

ՍՈՖԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԹԵՀՐԱՆԻՑ

Որդիական խորին հարգանքներով շնորհավորում ենք Ձեզ Վեհափառության ամանոր և Ս. Ծննդյան ու Մկրտության տոները:

ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱԼԿԱԹԱՅԻՑ

Խոնարհաբար մատուցանում ենք Ձեզ Վեհափառությանը և Գերագույն Հոգևոր Խորհրդիդ սրտագին շնորհավորություններ ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ, մաղթելով Ձեզ Սրբության և պատկառելի միաբանությանդ արևշատություն և Ս. Էջմիածնին՝ անսասանություն:

ՀՆԴԿԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՍՊԱՀԱՆԻՑ

Նոր տարվա և Ս. Ծննդյան տոների առթիվ հաճեցեք ընդունել մեր որդիական շնորհավորությունները:

ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԵՐԵՎԱՆԻՑ

Նոր տարվա և Ս. Ծննդյան առթիվ խնդրում ենք ընդունել խաղաղ և երջանիկ տարիների մաղթանքներ:

ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻՑ

Կոնդի Ս. Հովհաննես Եկեղեցու քահանայից դասը և հոգաբարձությունը հանդերձ դպրոց շնորհավորում ենք Ձեր նոր տարին, մաղթելով երկար և երջանիկ օրեր:

ԵՐԵՎԱՆԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻՑ

Անհուն ուրախությամբ շնորհավորելով Ձերդ Վեհափառության նոր տարին, մաղթում ենք երկարակեցություն, գործոց հաջողություն՝ ի բարօրություն Հայոց եկեղեցու և մեր ծաղկյալ Հայրենիքի:

ԵՐԵՎԱՆԻ Ս. ԶՈՐԱՎԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻՑ

Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցու քահանայական դասը, թեմական խորհուրդը և բոլոր հավատացյալները շնորհավորում ենք Ձերդ Վեհափառության և Ս. Էջմիածնի բոլոր միաբանության նոր տարին և Հիսուս Քրիստոսի Ծննդյան և Մկրտության սուրբ տոնը: Սրտագին ցանկություններով մաղթում ենք Բարձրյալին, որ տա աշխարհին խաղաղություն, Մայր Արոռին՝ անսասանություն և Ձերդ Վեհափառության՝ երկար կյանք և բեղմնավոր աշխատանք՝ ի փառս Մայր Հայրենիքի և Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցու:

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ, ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐ

ԿԻՐՈՎԱԿԱՆԻՑ

Շնորհավորում ենք Ձեր և Դերագույն Հոգևոր խորհրդի նոր տարին, Քրիստոսի Ս. Ծնունդը և Մկրտությունը: Ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն և բեղմնավոր աշխատանք: Մաղթում ենք առ Աստված, որ լինեք աստվածասեր Գահապետ Ս. Գրիգոր Լուսավորչի Գահի վրա, լինեք սեր և միաբանություն քարոզող հայ ազգին և խաղաղություն՝ Հայրենիքին:

ԿԻՐՈՎԱԿԱՆԻ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ
ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴ

ԱՐՄԱՎԻՐԻՑ

Հղում ենք Ձերդ Վեհափառությանը մեր առաջին շնորհավորանքները նոր տարվա և Ծննդյան տոնի առթիվ: Ցանկանում ենք առաջիկա տարում բեղմնավոր աշխատանք և հաջողություն Ձեր ջանքերում՝ ի բարօրություն մեր Ս. եկեղեցու:

ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՅՈՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ

ԿԻՐՈՎԱԲԱԴԻՑ

Կիրովաբադի հայոց եկեղեցու խորհուրդը, հոգևորականությունը և հավատացյալ համայնքը շնորհավորում են Ձերդ Ս. Օծությանը նոր տարվա և Քրիստոսի Ծննդյան առաջիկա տոնի առթիվ: Ցանկանում ենք Ձեզ առողջություն և երկարատև կյանք՝ ի բարօրություն հայ ժողովրդի և Հայոց եկեղեցու:

ԿԻՐՈՎԱԲԱԴԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲՈՒԵՆԱՐԵՍՏԻՑ

Կշնորհավորենք նոր տարին, կմաղթենք Ձեզ առողջություն և երկար կյանք:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ «ՆՈՐ ԿՅԱՆՔ»-Ի ԵՎ «ՍԵՎԱՆ»-Ի

ԹԱՎՐԻԶԻՑ

Ատրպատականի հայ ժողովուրդը թեմական ժողովի, թեմական խորհրդի հետ միասին և քահանայական դասը ամենախոնարհաբար մոտենում են ի համբույր նորաօծ Ս. Աջույդ, սրտագին շնորհավորելով նոր տարին և Ս. Մենդյան տոները, աղոթելով Ամենաբարձրյալին, որ պարգևե Ձերդ Ս. Օծության երկար կյանք և բարեբաստիկ օրեր՝ առաջնորդելով Ս. Լուսավորչի նոտը «ի վայրի դալարուջ և առ ջուրս հանգստեան»:

Ատրպատականի հայոց առաջնորդական տեղապահ՝
ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼԻՈՆԻՑ

Հանուն եկեղեցական դասուն և Լիոնի հայ գաղութին կշնորհավորենք նոր տարին և Ս. Մենդյան և Աստվածահայտնության բարեբաստիկ տոնը, մաղթելով Ձերդ Ս. Օծության երկար և առողջ կյանք:

Հոգևոր հովիվ Լիոնի և օրշակայից՝
ՎՐԱՄՇԱՊՈՒՀ ՔԱՀԱՆԱ ԳԱՐԻՊՅԱՆ

ԱԹԵՆՔԻՑ

Ամանորի և Ս. Մենդյան տոնի առիթով Ձերդ Վեհափառության օրհնաբեր հեռագրով ոգևորյալ, կուզանք հանուն գաղութիս մատուցանել մեր շնորհավորություններն ու որդիական սրտագին բարեմաղթանքները Ձերդ Վեհափառության արևշատության և Հայրապետական Աթոռոն անսասանության համար:

ՆԵՐՍԵՍ ՔԱՀԱՆԱ ԽՈՇՈՐՅԱՆ

ՆԻՅՅԱՅԻՑ

Ամանորի և Ս. Մենդյան տոներուն առիթով կշնորհավորենք արժանընտիր Վեհափառությանդ և կմաղթենք արևշատություն, երջանիկ ու բեղմնավոր կյանք, Մայր Աթոռին՝ անսասանություն, Հայրենիքին՝ բարություն:

ՎԱՐԴԱՆ ՔԱՀԱՆԱ ԺԱՄԿՈՉՅԱՆ

ՊԼՈՎԴԻՎԻՑ

Նոր տարվա և Ս. Մենդյան տոների առթիվ ներկայացնում ենք Ձերդ Ս. Օծության մեր լավագույն բարեմաղթությունը Ձեր բարության և գործերի հաջողության համար՝ ի պայծառություն Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի:

Պլովդիվի հայոց եկեղեցական խորհրդի նախագահ՝
Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԲԱՂԴԱԴԻՑ

Ամբողջ համայնքի հետ հղում ենք Ձեզ սրտագին շնորհավորություններ բարեբաստիկ նոր տարվա և երջանիկ Ս. Մենդյան առթիվ, ցանկանալով Ձեզ երկար կյանք և բարություն:

Բաղդադի հայոց հայկական համայնքի խորհրդի նախագահ՝
ՆՇԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻՑ

Ամանորի և Ծննդյան տոների առթիվ մաղթում ենք, որ Ձեր Վեհափառության եռանդուն և բազմաշխատ գործունեությունը լավագույն արդյունքներով պսակվի:

ՊՐՈՖ. ԱՇՈՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻՑ

Ջերմորեն շնորհավորում ենք Ձեր նոր տարին, ցանկանում ենք առողջություն և երկար կյանք:

ՀԱԿՈԲ ԿՈՋՈՅԱՆ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Թույլ ավեք շնորհավորել նոր տարին ու ցանկանալ Ձեզ երկար կյանք ու հաջողություններ Ձեր բարձր գործում:

Մ. ԵՎ Ե. ԱՍԼԱՄԱԶՅԱՆ ՔՈՒՅՐԵՐ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան կրկնակի տոներուն առթիվ կնայտնեմ իմ անկեղծ շնորհավորություններս: Կմաղթեմ Ձերդ Վեհափառության հաջողջ կյանք և արևշատություն, բազում տարիներ, հովվելու համար Ս. Լուսավորչի հավատարիմ զավակները և ավելի ևս զորացնելու համար կրոնական ու հոգեկան կապը, որ կմիացնե զաղթաշխարհի աստանդական հայությունը հայրենի հարազատ ու ամրակուռ օջախին հետ:

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՐՍԼԱՆՅԱՆ

ՆԻԳՈՋԻԱՅԻՑ

Ամանորի և Ս. Ծննդյան առթիվ ընդունեցեք սրտաբուխ մաղթանքներս Ձերդ Վեհափառության երջանկության համար:

ՆՈՒՊԱՐ ՄԱԳՍՈՒՏՅԱՆ

Ամանորի և Փրկչի հրաշափառ Ս. Ծննդյան տոների առթիվ Վեհափառ Հայրապետի անունով առողջության, արևշատության, հաջող ու բեղմնավոր գործունեության, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության և Մայր Հայրենիքի բարգավաճման սրտաբուխ բարեմաղթություններով հեռագրեր և նամակներ են ուղարկել նաև հետևյալները.

ԱՊԱՐԱՆԻՑ— Հովհաննես քահանա Հովհաննիսյան.

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ— Արտաշես քահանա Մանուկյան և եկեղեցական խորհուրդ.

ԲԱԶԱՐՋԳԻՑ— Զամարիա քահանա Շիրինյան.
Օննիկ Ա. Գույումճյան.

ԲԱՔՎԻՑ— Վահան ավագ քահանա.
Նավասարդ քահանա Գասպարյան.

ԲՈՏՈՇԱՆԻՑ— Անտոն Տրանգու և Սեբեբերիմ Մառուկյան.

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ— Արսեն քահանա Վարժապետյան.
Ստեփան սարկավագ.
Սրբուհի և Նվարդ Պալճյան.
Գալփամյան.
Արշալույս և Սարգիս Անտոնյան.
Քրիստիա Քրիստիա.
Ճեպելյան.
Գառնիկ Տեյիրմենճյան.
Սարգիս Հովհաննիսյան.
Հրանտ Հակոբյան.
Պ. Պետրոսյան.
ԲՈՒՐԲԱՆԿԻՑ— Նիկ և Շուշանիկ Իսահակյան.
ԵՐԵՎԱՆԻՑ— Խորեն ավագ քահանա Շուշանյան.
Տաճատ ավագ քահանա Տեր-Վարդանյան.
Սարգիս քահանա Անդրեասյան.
Ֆ. Բոյչանյան.
Ֆայտոնյան ընտանիք.
Սիսոն Մարտիրոսյան.
ԷՋՄԻԱԾՆԻՑ— Մեսրոպ Մարտիրոսյան և Գևորգ Պետրոսյան.
ԹԲԻԼԻՍԻՑ— Թբիլիսիի Ս. Գևորգ եկեղեցու երգեցիկ խմբի կոլեկտիվ.
Սաղաթելյան ընտանիք.
ԹԵՀՐԱՆԻՑ— Հովհաննես ավագ քահանա Հաջյան.
Վահան ավագ քահանա Միքայելյան.
ԼԵՆԻՆԱԿԱՆԻՑ— Հովհաննես ավագ քահանա Տեր-Սարգսյան.
Ադամյան.
ԿԻՐՈՎԱԿԱՆԻՑ— Հարություն քահանա Հարությունյան.
ԿՈՆՍՏԱՆՑԱՅԻՑ— Մեսրոպ քահանա Պարոնյան.
ՁԻԹՀԱՆՔՈՎԻՑ— Խորեն ավագ քահանա Տեր-Հակոբյան.
ՂՁԼԱՐԻՑ— Տեր Հակոբ քահանա և եկեղեցական խորհուրդ.
ՂՐԻՄԻՑ— Կարապետ քահանա Հակոբյան և եկեղեցական խորհուրդ.
ՄԱՆՉԵՍՏՐԻՑ— Աշոտ քահանա.
ՄԱՐՍԵԼԻՑ— Հովհաննես Վարժապետյան.
ՄՈՆՏԵՎԻԴԵՈՅԻՑ— Հ. Ռուբինյան.
ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻՑ— Զավեն քահանա Հակոբյան.
ՈՒՍՏԸՐԻՑ— Ներսես քահանա Շահինյան.
ՊԼՈՎԴԻՎԻՑ— Գևորգ քահանա Սարյան.
Ներսես Գասպարյան.
ՌՈՍՏՈՎԻՑ— Ներսես Խաբլամաջյան.
ՌՈՒՍԵԻՑ— Ռուսեի հայոց եկեղեցական վարչություն.
ՍՈՖԻԱՅԻՑ— Վահան ավագ քահանա Փափազյան.
Հայկ սարկավագ Մուրադյան.
Հայրապետ կիսասարկավագ Խ. Գույումճյան.
Փաստաբան Ավետիս Ռումյան.
Արտաշես Պեկյան.
ՍՏԱԼԻՆԻՑ— Տրդատ քահանա Տուվարճյան.
ՍՈՒՉԱՎԱՅԻՑ— Գենել քահանա Մանդալյան.
ՕՐՋՈՆԻԿԻՁԵԻՑ— Վահան ավագ քահանա Թավարբեկյան: